

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

----- 2018 ԹՎԱԿԱՆԻ N - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՍԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՍԵՎԱՆԻ ԱՐՇԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ
ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻԱԶՈՒԼՄԱՆ ՁԵՎՈՎ «ՍԵՎԱՆԻ
ԲԱԶՄԱԳՈՐԾԱՌՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 64-րդ հոդվածի 1-ին մասի և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետի «զ» ենթակետի, 9-րդ և 24-րդ հոդվածների պահանջներին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Սևանի պետական քոլեջ» (պետական գրանցման համարը՝ 35.210.00999) և «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Սևանի արհեստագործական պետական ուսումնարան» (պետական գրանցման համարը՝ 35.210.01017) պետական ոչ առևտրային կազմակերպությունները միաձուլման ձևով վերակազմակերպել՝ ստեղծելով «Սևանի բազմագործառության պետական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպություն:

2. Սահմանել, որ՝

1) «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Սևանի պետական քոլեջ» և «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Սևանի արհեստագործական պետական ուսումնարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունների իրավահաջորդը «Սևանի բազմագործառության պետական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպությունն է և վերջինիս են անցնում միաձուլված իրավաբանական անձերի իրավունքներն ու պարտականությունները՝ փոխանցման ակտերին համապատասխան.

2) «Սևանի պետական բազմագործառության քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպության գործունեության հիմնական առարկան միջին մասնագիտական կրթական ծրագրերի իրականացումն է: Քոլեջը կարող է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել նաև հանրակրթական և (կամ) նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրեր,

3) «Սևանի պետական բազմագործառույթային քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպության գործունեության հիմնական նպատակներն են՝

ա. ազգային, բարոյական և համամարդկային արժեքների ոգով կրթության կազմակերպումը, անձի մտավոր և հոգևոր զարգացման պահանջմունքների բավարարումը.

բ. արհեստագործական և միջին մասնագիտական կրթության որակի բարելավման ապահովումը և բարելավման համապատասխան համակարգի կիրառումը.

գ. ուսումնական գործընթացի կազմակերպման թափանցիկության և հրապարակայնության ապահովումը.

դ. բնակչության շրջանում գիտելիքների տարածումը, նրա կրթական և մշակութային մակարդակի բարձրացումը.

ե. սոցիալական գործընկերների հետ համագործակցության ապահովումը.

զ. ուսանողների մեջ հմտությունների և աշխատանքի նկատմամբ պատասխանատվության արմատավորումը:

3. «Սևանի պետական բազմագործառույթային քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը կարող է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

1) միջին մասնագիտական, նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության, հանրակրթության, լրացուցիչ կրթության կազմակերպում.

2) արտադպրոցական դաստիարակության կազմակերպում.

3) նախապատրաստական դասընթացների կազմակերպում.

4) մասնագիտական ուսուցման և այլ դասընթացների կազմակերպում.

5) կադրերի վերապատրաստում, վերադասավորում և որակավորման բարձրացում.

6) ստեղծագործական, հետազոտական, փորձարարական և փորձագիտական գործունեության իրականացում.

7) ուսումնաարտադրական, արտադրական գործունեություն և սպասարկման ծառայությունների իրականացում.

8) ուսումնամեթոդական նյութերի, ձեռնարկների մշակում.

9) կրթական, մշակութային, սոցիալական, մարզական և այլ բնույթի միջոցառումների կազմակերպում և (կամ) սպասարկում.

10) հրատարակչական գործունեություն.

11) քոլեջի ուսանողների և աշխատողների հանրային սննդի կազմակերպում.

12) քոլեջի ուսանողների և աշխատողների համար հանրակացարանային ծառայությունների կազմակերպում.

13) քոլեջի ուսանողների և աշխատողների հանգստի կազմակերպում.

14) մշակութային գործունեության իրականացում:

4. «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետի «գ», «դ» «ե» և «է» ենթակետերով նախատեսված լիազորությունները վերապահել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությանը:

5. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարին՝

1) երկամսյա ժամկետում հաստատել «Սևանի պետական բազմագործառույթային քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը, միաձուլման մասին պայմանագիրը, փոխանցման ակտերն ու սեփականության իրավունքով նրան հանձնվող և անհատույց օգտագործման իրավունքով ամրացվող գույքի կազմը.

2) «Սևանի պետական բազմագործառույթային քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության հաստատումից հետո երկամսյա ժամկետում ապահովել «Սևանի պետական բազմագործառույթային քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպության պետական գրանցումը՝ կազմակերպության միջոցների հաշվին:

6. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետին՝ սույն որոշման 5-րդ կետի 2-րդ ենթակետում նշված գործընթացի ավարտից հետո, եռամսյա ժամկետում, «Սևանի պետական բազմագործառույթային քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպության հետ կնքել «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Սևանի պետական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպության հետ 05.04.2013 թվականի կնքված անշարժ գույքի անհատույց օգտագործման N 47/0013 և «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Սևանի արհեստագործական պետական ուսումնարան» պետական ոչ առևտրային կազմակերպության հետ 07.11.2014 թվականի կնքված անշարժ գույքի անհատույց օգտագործման N 99/0014 պայմանագրերում սույն որոշումից բխող պայմանագրերի փոփոխման մասին համաձայնագիր (այսուհետ՝ համաձայնագիր)՝ դրանում սահմանելով, որ համաձայնագրի նոտարական վավերացման և համաձայնագրից ծագող գույքային իրավունքների պետական գրանցման ծախսերը ենթակա են իրականացման «Սևանի պետական բազմագործառույթային քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցների հաշվին:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՍԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՍԵՎԱՆԻ ԱՐՇԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ
ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻԱԶՈՒԼՄԱՆ ՁԵՎՈՎ «ՍԵՎԱՆԻ
ԲԱԶՄԱԳՈՐԾԱՌՈՒԹԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ
ՄԱՍԻՆ

Անհրաժեշտությունը

«Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության
«Սևանի պետական քոլեջ» և «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության
նախարարության «Սևանի արհեստագործական պետական ուսումնարան» պետական
ոչ առևտրային կազմակերպությունները միաձուլման ձևով «Հայաստանի
Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Սևանի
բազմագործառության պետական քոլեջ» պետական ոչ առևտրային
կազմակերպության վերակազմակերպելու մասին» ՀՀ կառավարության որոշման
նախագիծը մշակվել է ՀՀ վարչապետի 2017 թվականի մայիսի 11-ի N 29.6/[404812]-
17(19) նիստի արձանագրության 1-ին կետի 6-րդ ենթակետի հանձնարարականի
կատարման շրջանակներում՝ կրթության ոլորտում գործող միջին մասնագիտական
կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների թվաքանակի
կրճատման և դրանց գործունեության օպտիմալացման (խոշորացման) նպատակով:

Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

Սևան քաղաքային համայնքում /այսուհետև՝ համայնք/ գործում է Հայաստանի
Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Սևանի պետական
քոլեջ» և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության
«Սևանի արհեստագործական պետական ուսումնարան» պետական ոչ առևտրային
կազմակերպությունները:

Կարգավորման նպատակը

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության
«Սևանի պետական քոլեջ» և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության
նախարարության «Սևանի արհեստագործական պետական ուսումնարան» պետական

ոչ առևտրային կազմակերպությունների օպտիմալացման (խոշորացման) արդյունքում Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Սևանի պետական բազմագործառույթային քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպությունում կբարձրանա ուսումնական հաստատության կառավարման արդյունավետությունը, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Սևանի պետական քոլեջ» և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Սևանի արհեստագործական պետական ուսումնարան» պետական ոչ առևտրային կազմակերպություններին ամրացված անշարժ գույքը, իրավահաջորդությամբ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Սևանի պետական բազմագործառույթային քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը անհատույց տրամադրելու դեպքում կբարելավվեն շենքային պայմանները, հնարավորություն ընձեռնելով պահպանելով ուսուցանվող մասնագիտությունները, ներդնել մարզի աշխատաշուկայի պահանջները ելնելով նոր մասնագիտություններ, ինչպես նաև հնարավորություն կստեղծվի մեկ հաստատության ներսում իրականացնել նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր:

«Հ աշխատանքային օրենսգրքի 126-րդ հոդվածը սահմանում է. «Կազմակերպության վերակազմակերպումը, ինչպես նաև դրա նկատմամբ պարտավորական կամ այլ իրավունքներ ունեցող անձանց փոփոխությունը հիմք չէ աշխատանքային պայմանագիրը լուծելու համար, եթե տեղի չի ունենում աշխատողների թվաքանակի և (կամ) հաստիքների կրճատում:»:

Միաձուլման ձևով վերակազմակերպման արդյունքում Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Սևանի պետական քոլեջ» և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Սևանի արհեստագործական պետական ուսումնարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողները կհամարվեն Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Սևանի բազմագործառույթային պետական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողներ:

Միաձուլման արդյունքում, նոր հաստիքացուցակի հաստատմամբ հնարավոր են հաստիքների կրճատումներ, մասնավորապես վարչական և ուսումնաօժանդակ:

«Հ կառավարության որոշման նախագծով նախատեսված օպտիմալացման (խոշորացման) արդյունքում՝ ուսումնական հաստատություններից վարչական,

ուսումնաստանդակ ու սպասարկող անձնակազմից կրճատվում է 5.8 հաստիքային միավոր: Նախարարությունը քայլեր կձեռնարկի աշխատանքից կրճատվածներին այլ ուսումնական հաստատություններում կամ միավորվող հաստատություններում դրույքաչափերի տրոհմամբ՝ աշխատանքով ապահովելու համար:

Սակայն կրճատվածներից ոչ բոլորին հնարավոր կլինի ապահովել աշխատանքով, որը պայմանավորված է ուսումնական հաստատություններում թափուր աշխատատեղերի գրեթե բացակայությամբ, ինչպես նաև դրույքաչափերի նվազման հետևանքով՝ աշխատավարձերի նվազման դժգոհությամբ (ուսումնական հաստատություններում հիմնականում ստանում են նվազագույն չափի աշխատավարձ):

Օպտիմալացվող (խոշորացվող) ուսումնական հաստատությունների հաստիքների քանակի փոփոխություն կարող է կատարվել նաև 2018/2019 ուսումնական տարվա ընդունելության արդյունքից՝ կապված ուսանողների թվի նվազեցումից կամ ավելացումից:

Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք

Նախագիծը մշակվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից:

Ակնկալվող արդյունքը

Նախագծի ընդունման դեպքում ակնկալվում է վերոնշյալ ՊՈԱԿ-ների միաձուլման արդյունքում՝ ապահովել դրանց գործունեության արդյունավետության բարձրացումը և պետական բյուջեի միջոցների արդյունավետ օգտագործումը:

**ՀՀ Գեղարքունիքի մարզի սոցալ-տնտեսական իրավիճակը
(հիմք՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալները՝**

http://armstat.am/file/article/trud_2017_9.pdf,

http://armstat.am/file/article/poverty_2017_a_2.pdf)

2016թ.-ին աղքատության մակարդակի ցուցանիշները գերազանցել են 2008թ.-ի ցուցանիշներին, ինչպես երկրի մակարդակով, այնպես էլ որոշ մարզերում և քաղաք Երևանում, բացի Արագածոտնի, Արարատի, **Գեղարքունիքի**, Կոտայքի և Վայոց Ձորի մարզերից: Այդուհանդերձ, ավելի արագ տեմպերով այդ ցուցանիշի աճ գրանցվել է Տավուշում՝ 1.5 անգամ, քաղաք Երևանում, Արմավիրում և Սյունիքում՝ 1.2 անգամ:

ՀՀ Գեղարքունիք մարզում աղքատության մակարդակի ցուցանիշներ են.

ՀՀ Գեղարքունիք մարզ	2008թ.		2016թ.	
	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	Ծայրահեղ աղքատ	Աղքատ
	0.4%	32%	1.0%	28.8%

ՀՀ Գեղարքունիք մարզում գործազրկության ցուցանիշներն են.

ՀՀ Գեղարքունիք մարզ	2015թ.	2016թ.
	4.7%	4.2%

ՀՀ Գեղարքունիք մարզում նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթությամբ կադրերի պահանջարկը՝ ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տեղեկատվության:

Մարզերի անվանումը	Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթությամբ	Միջին մասնագիտական կրթություն
ՀՀ Գեղարքունիքի մարզ	խոհարար	ապահովագրական գործի մասնագետ
	հացթուխ	հաշվապահ
	բուֆետապան	ֆինանսիստ
	հրուշակագործ	բանկային գործի մասնագետ
	մատուցող	մանկաբարձ
	վաճառող	դեղագործ
	դիմահարդար	բուժքույր
	մատնահարդար	կոսմետոլոգ
	վարսահարդար	նախադպրոցական տարիքի երեխաների դաստիարակ

դերձակ	մենեջեր /տարբեր/
կարի սարքավորումների օպերատոր	իրավագետ
համակարգչային օպերատոր	տեխնիկ՝ հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովման
գործավար	տեխնիկ՝ հաշվողական տեխնիկայի միջոցների և համակարգչային ցանցերի տեխնիկական սպասարկում
գանձապահ	ձկնաբույծ
բետոնագործ	
ծեփագործ	
թիթեղագործ	
տանիքագործ	
էլեկտրո, գազա եռակցող	
էլեկտրիկ	
փականագործ-գործիքագործ	
երեսպատող-սալիկապատող	
ատաղձագործ	
հյուսն	
ներկարար	
փականագործ՝ ավտոմոբիլային տրանսպորտի նորոգման	
փականագործ՝ գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների	
փականագործ՝ գազի սարքավորումների շահագործման, տեխնիկական սպասարկման և վերանորոգման	
ֆերմեր, գյուղատնտես	
բանջարաբույծ	
այգեգործ	

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Սևանի պետական քոլեջ» և «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Սևանի արհեստագործական պետական ուսումնարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունները միաձուլման ձևով «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Սևանի բազմագործառութային պետական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպության վերակազմակերպելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունմամբ այլ իրավական ակտերում փոփոխությունների և/կամ լրացումների անհրաժեշտության չկա:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Սևանի պետական քոլեջ» և «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Սևանի արհեստագործական պետական ուսումնարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունները միաձուլման ձևով «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Սևանի բազմագործառութային պետական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպության վերակազմակերպելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունումը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չի առաջացնի:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՍԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «
ՍԵՎԱՆԻ ԱՐՇԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ
ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻԱՁՈՒԼՄԱՆ ԶԵՎՈՎ «ՍԵՎԱՆԻ
ԲԱԶՄԱԳՈՐԾԱՌՈՒԹԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հ/ Հ	Առարկության, առաջարկության հեղինակը, Գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացու թյուն	Կատարված փոփոխություն
1.	ՀՀ արդարադատության նախարարություն	<p>Առաջարկում է</p> <p>1. ««Սևանի պետական քոլեջ» և «Սևանի արհեստագործական պետական ուսումնարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունները միաձուլման ձևով «Սևանի բազմագործառնության պետական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպության վերակազմակերպելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի (այսուհետ՝ նախագիծ) նախաբանում «2-րդ մասի» բառերն անհրաժեշտ է փոխարինել «2-րդ կետի» բառերով՝ նկատի ունենալով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորումները:</p> <p>2. Նախագծի ամբողջ տեքստում ««Սևանի արհեստագործական պետական ուսումնարան»» բառերն անհրաժեշտ է փոխարինել ««Սևանի արհեստագործական ուսումնարան»» բառերով՝ նկատի ունենալով ՀՀ կառավարության 2004 թվականի հուլիսի 7-ի «Հայաստանի Հանրապետության արհեստագործական հոսքով ավագ դպրոցներն արհեստագործական ուսումնարանների վերանվանելու, մի շարք պետական ոչ առևտրային</p>	<p>1. Ընդունվել է</p> <p>2. Չի ընդունվում</p>	<p>1. Որոշման նախագծի նախաբանում «2-րդ մասի» բառերն փոխարինվել է «2-րդ կետի» բառերով:</p> <p>2. Համաձայն ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում 06.02.2012թ. գրանցված կանոնադրության ՊՈԱԿ-ի անվանումը «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության ««Սևանի արհեստագործական պետական ուսումնարան»» է:</p>

		<p>կազմակերպություններ վերակազմակերպելու «Հայաստանի Հանրապետության պետական արհեստագործական ուսումնարան» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 1210-Ն որոշման կարգավորումները:</p> <p>3. Նկատի ունենալով այն հանգամանքը, որ «Սևանի պետական քոլեջ» և «Սևանի արհեստագործական պետական ուսումնարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունները, որոնք նախագծի համաձայն վերակազմակերպվում են այլ իրավաբանական անձի, ընդգրկված են համապատասխանաբար ՀՀ կառավարության 2002 թվականի հունիսի 20-ի N 1009-Ն և ՀՀ կառավարության 2004 թվականի հուլիսի 1-ի N 1210-Ն որոշումների հավելվածներով հաստատված ցանկերում, անհրաժեշտ է համապատասխան փոփոխություններ կատարել նաև հիշյալ որոշումներում:</p> <p>4. Նախագծում անհրաժեշտ է ներառել դրույթ պետական կազմակերպության կառավարումն իրականացնող այն լիազորված պետական մարմնի մասին, որի ենթակայությանը հանձնվում է պետական կազմակերպությունը՝ ելնելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներից:</p> <p>5. Նախագծի 7-րդ կետում «7-րդ» թիվն անհրաժեշտ է փոխարինել «6-րդ» թվով:</p>	<p>3.2ի ընդունվում</p> <p>4.Ընդունվել է</p> <p>5. Ընդունվել է</p>	<p>3. Առաջարկը չի ընդունվել, քանի որ ՀՀ կառավարության 2002 թվականի հունիսի 20-ի N 1009-Ն և 2004 թվականի հուլիսի 1-ի N 1210-Ն որոշումներով այդ ուսումնական հաստատությունները վերակազմակերպվել են ՊՈԱԿ-ների:</p> <p>4.Առաջարկին համապատասխան նախագծում լրացվել է 4-րդ կետ:</p> <p>5.Որոշման նախագծի լրամշակումից հետո ճշտվել է ամբողջ համարակալումը:</p>
2.	<p>ՀՀ ֆինանսների նախարարություն 2017-07-12 թիվ 01/9-2/12675-17</p>	<p>Առաջարկում է</p> <p>1. Նախագծի 7-րդ կետը հանել, քանի որ այն կրկնում է Նախագծի 5-րդ կետի բովանդակությունը,</p> <p>2. 9-րդ կետի 3-րդ ենթակետի «գրանցումը» բառից հետո լրացնել «նշված</p>	<p>1.Ընդունվել է</p> <p>2.Ընդունվել է</p>	<p>1.Որոշման նախագիծը առաջարկին համապատասխան լրամշակվել է և հանվել է 7-րդ կետը:</p> <p>2.Որոշման նախագիծը 9-րդ կետի 3-րդ ենթակետում /լրամշակումից հետո 5-րդ</p>

		<p>կազմակերպության միջոցների հաշվին» բառերը,</p> <p>3. ճշտել Նախագծի կետերի համարակալումը,</p> <p>4. «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ պարբերության համաձայն՝ Նախագծի 10-րդ կետի «պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից» բառերը փոխարինել «պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը» բառերով:</p>	<p>3.Ընդունվել է</p> <p>4. 2ի ընդունվել</p>	<p>կետի 3-րդ ենթակետը/ առաջարկին համապատասխան լրացվել է«կազմակերպության միջոցների հաշվին» բառերը:</p> <p>3.Որոշման նախագծում ճշտվել է համարակալումները:</p> <p>4. Որոշման նախագիծը դարձել է անհատական և նշված կետը հանվել է:</p>
3.	<p>ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն 2017թ.-08-04 01/15.1/4942-17</p>	<p>Առաջարկում է.</p> <p>1.Նախագծի նախաբանում «63-րդ հոդվածի, 64-րդ հոդվածի 2-րդ մասի» բառերը փոխարինել «63-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 64-րդ հոդվածի 1-ին մասի» բառերով:</p> <p>2. Նախագծում կամ նախագծի հիմնավորման մեջ բացակայում են ՊՈԱԿ-ների վերակազմակերպման արդյունքում ազատվող անշարժ գույքի հետագա տնօրինման հետ կապված հարաբերությունները:</p> <p>3. 1) Նախագծի հիմնավորման մեջ բացակայում է միաձուլման ձևով վերակազմակերպման արդյունքում հաստիքների հնարավոր կրճատման, ինչպես նաև այդ կրճատվող հաստիքները զբաղեցնող անձանց այլ աշխատանքի տեղավորման հնարավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը.</p> <p>2) նախագծի հիմնավորման «Կարգավորման նպատակը» բաժնում ներկայացվում է միացման ձևով վերակազմակերպման արդյունքում աշխատողների կարգավիճակի մասին, այն դեպքում, երբ վերակազմակերպումը տեղի է ունենում միաձուլման ձևով:</p>	<p>1.Ընդունվել է</p> <p>2.Ընդունվել է</p> <p>3. 1) 2ի ընդունվում</p> <p>2) Ընդունվել է</p>	<p>1. Որոշման նախագծի նախաբանում առաջարկին համապատասխան կատարվել են փոփոխություններ:</p> <p>2. Որոշման նախագծում լրացվել է նոր 6-րդ կետ, ՊՈԱԿ-ներին ամրացված անշարժ գույքի վերաբերյալ</p> <p>3. 1) Որոշման նախագծի հիմնավորման մեջ արդեն իսկ նշվել նախատեսվող հաստիքների կրճատման մասին, իսկ թվաքանակի և նրանց հետագա աշխատանքի տեղավորման մասին կարող է հստակեցվել միայն միաձուլման աշխատանքների ավարտից հետո:</p> <p>2) որոշման նախագծի հիմնավորման «Կարգավորման նպատակը» բաժնում առաջարկին համապատասխան կատարվել է ճշտում:</p>

4.	<p>ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն 2017-08-04 թիվ 01/13.22/5047-17</p>	<p>Առաջարկում է</p> <p>1. Նախագծի նախաբանում հղում կատարել ոչ թե ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասին, որը վերաբերում է իրավաբանական անձանց վերակազմակերպման միացման ձևին, այլ Օրենսգրքի 64-րդ հոդվածի 1-ին մասին: Հղում կատարել նաև «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 9-րդ և 24-րդ հոդվածներին:</p> <p>2. Նախագծի կետերի համարակալումն ուղղել, մասնավորապես՝ նախագծի 5-րդ կետից հետո լրացված դրույթը կրում է «<7>>» թիվը, իսկ 7-րդ կետից հետո լրացված դրույթը՝ «<9>>»:</p> <p>3. Նախագծից հանել 9-րդ կետի 1-ին ենթակետը և որոշումով հստակեցնել անհատույց օգտագործման իրավունքով «Սևանի բազմագործառույթային պետական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպությանն ամրացվող անշարժ գույքը, ինչպես նաև կազմակերպության կողմից չօգտագործվող անշարժ գույքը հանձնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությանը:</p>	<p>1.Ընդունվել է</p> <p>2. Ընդունվել է</p> <p>3.Ընդունվել է</p>	<p>1.Որոշման նախագծի նախագծի նախաբանում առաջարկին համապատասխան կատարվել է փոփոխություններ:</p> <p>2. Որոշման նախագծում առաջարկին համապատասխան կատարվել է համարակալումների ճշտում:</p> <p>3.Որոշման նախագիծը լրամշակվել է և լրացվել է նորը 6-րդ կետ: Չօգտագործվող ազատ տարածքների բացակայության պատճառով ՊՈԱԿ-ներից ամրացված անշարժ գույք հետ վերցնելու անհրաժեշտություն չի նախատեսվում:</p>
5.	<p>ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե 2017թ.-08-07 թիվ ՄՍ/4851-17</p>	<p>Առաջարկություն և դիտողություն չունի</p>		
6.	<p>ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան 2017-10-24 թիվ 01/05/4889-17 գրություն</p>	<p>Որոշման նախագծի վերաբերյալ դիտողություններ կամ առաջարկություններ չունենք</p>		
7.	<p>ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի ղեկավար 2017.11.06</p>	<p>Որոշման նախագծի վերաբերյալ դիտողություններ կամ առաջարկություններ չունենք</p>		
8.	<p>ՀՀ Նախագահի աշխատակազմ 2017-12-11 թիվ Ղ 3080 գրություն</p>	<p>ՀՀ կառավարության որոշումների նմանօրինակ նախագծերը մշակելիս անհրաժեշտ է ներկայացնել նաև հիմնավորումներ՝ հաշվի առնելով տվյալ տարածաշրջանի սոցիալ-տնտեսական իրավիճակի նկարագրի (աղքատության մակարդակ, գործազրկության մակարդակ, աշխատաշուկա և այլն), ինչպես նաև աշխատանքից</p>	<p>Ընդունվել է</p>	<p>Հիմնավորումում ներկայացվել է պարզաբանումներ</p>

		ազատվածներին այլ աշխատանքի անցնելու նպատակով պետական օժանդակության ծրագրերի առկայությունը՝ գործընթացի արդյունավետությունը գնահատելու նպատակով:		
9.	ՀՀ Նախագահի աշխատակազմ 2018-02-16 թիվ ԱՂ-574-2018 գրություն	ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չկան:		